ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, 375010, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 2, հեռ (3741) 52 16 20, ֆաքս (3741) 565786

N 25/25/1958-12

<04> 06 2012թ

Ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
<Ինֆորմացիայի ազատության կենտրոն> ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին

*Ձեր՝ 29.05.2012թ. N171-ի 9*

*Հարգելի պարոն Հայրապետյան*

Ի պատասխան Ձեր՝ վերը նշված գրությամբ ներկայացված հարցմանը, հայտնում եմ, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Էներգետիկայի պետական տեսչության (ԷՊՏ) բոլոր աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, որոնց նկատմամբ կիրառվում են <Քաղաքացիական ծառայության մասին> ՀՀ օրենքի (Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումները, մասնավորապես, (*<1.Քաղաքացիական ծառայողն իրավունք չունի՝ ... է) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.>*): Միաժամանակ Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված են քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները:

Առաջադրված հարցադրումների վերաբերյալ ներկայացնում եմ հետևյալը՝

1. 2011 թվականին, որպես խրախուսանքի տեսակ, միանվագ դրամական պարգևատրում է ստացել ԷՊՏ Վերլուծության, վիճակագրության և շահագործման համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ռոզա Ենգիբարյանը՝ մեկ պաշտոնային դրույքաչափով:

ԷՊՏ ոչ մի աշխատող 2011 թվականին նվեր չի ստացել:

2. 2011 թվականի համար ԷՊՏ աշխատողները, <Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով, երկու անգամ ստացել են դրամական պարգևատրումներ, միջին ամսական դրույքաչափի՝ համապատասխանաբար 70 և 130%-ի չափով:

ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ